ԿԻԼԻԿԻՈՅ ԱԶԱՐԻԱ ԿԱՐԿԱՌԵՑՈՒ ՀԱԿԱԹՈՌՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ (ԺԷ-ԺԸ. դդ.) (ԸՍՏ ՀԱԼԷՊԻ ՇԱՐԻԱ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՐԱԲԵՐԷՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ)

ՎԵՆԵՐԱ ՄԱԿԱՐԵԱՆ
makaryanvenera@yahoo.com

ՄՈՒՏՔ

Հալէպի գաղթօջախը Սիրիայի գլխաւոր հայկական գաղթօջախն է: Հալէպում հայերը յիշւում են դեռեւս Ե. դարի վերջ-Զ. դարի սկզբներին, երբ Երուսաղէմ ուխտի մեկնելու համար անցնում էին պատմական Հալէպ կամ Բերիա քաղաքով[1]: Որպէս հայկական կենսունակ գաղթօջախ այն կայացել է ԺԴ. դարի առաջին կէսին, ըստ այնտեղ գրուած Աւետարանների յիշատակարաններին[2]:

Հալէպի, Անտիոքի, Բէյլանի եւ հիւսիսային Սիրիայի հայկական թեմերը գտնւում էին Կիլիկիոյ կաթողիկոսի, իսկ Լաթաքիայի, Դամասկոսի եւ Պէյրութի համայնքերը՝ Երուսաղէմի պատրիարքի իրաւասութեան ներքոյ[3]:

Հալէպը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երկրորդ մեծ եւ հնագոյն թեմն է: Որպէս Բերիայի թեմակալ առաջնորդ առաջին անգամ՝ 1438ին յիշատակւում է Յովակիմ Արք.ը (1432-1442)[4]: Բերիայի թեմի հայոց գաւազանագիրքն ընդգրկում է վաթսուն թեմակալ առաջնորդներ[5]:

1660ականներից մինչեւ 1920ականները Հալէպը եղել է Կիլիկիոյ կաթողիկոսութեան վարչական եւ հոգեւոր կենտրոն[6], առաջնորդանիստը՝ Սրբոց Քառասնից Մանկանց մայր եկեղեցին:

ԺԷ. դարում Սսի Կաթողիկոսութիւնում առաջացաւ յուզումների մեծ ալիք՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ, առհասարակ, Հայ Եկեղեցու ներքին անհամաձայնութիւններով եւ կաթոլիկութեան տարածմամբ պայմանաւորուած: Ստեղծուած իրավիճակը յանգեցրեց Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հալէպի թեմում հակաթոռութեան առաջացմանը[7]:

Կիլիկիոյ Յովհաննէս Դ. Այնթապցու (1601-1621) պաշտօնավարութեանը զուգահեռ՝ 1601 նոյն Դեկտեմբեր ամսուայ վերջերին Հալէպում սկիզբ է առնում հակաթոռութիւն՝ Պետրոս Կարկառեցու կաթողիկոսութեամբ[8]: Ու թէեւ երկու տարի անց հաշտութիւն գոյացաւ, սակայն ըստ Գրիգոր Դարանաղցու՝ «*երեսօք եւ ոչ սրտիւք*»[9]: Իսկ Պետրոսի մահից յետոյ (1608) Յովհաննէս Այնթապցին միահեծան վարեց կաթողիկոսական պաշտօնը եւ վերացաւ պառակտումը[10]:

Պատմութիւնը կրկնուեց նաեւ Խաչատուր Գ. Գաղատացու (Սեբաստացի) (1657-1674) կաթողիկոսութեան ժամանակ, երբ 1663ին Հալէպում հակաթոռ կաթողիկոս դարձաւ Դաւիթ Բերիացին, որը ծագումով Կարկառեցի էր[11]: Այս երկուսի մահուան թուականները,

Օրմանեանը, յղելով Չամչեանին, տալիս է 1679, եւ նշում, որ թէ՛ Խաչատուր Սեբաստացին՝ 1665ին Աղեքսանդր Է. Պապին եւ թէ՛ հակաթոռ Դաւիթ Բերիացին՝ 1668ին Կղեմէս Թ. պապին «ուղիղ դաւանութեան» թղթեր են ուղարկել[12]:

Խաչատուր կաթողիկոսի եւ հակաթոռ Դաւթի մահից յետոյ բաժանումը չվերջացաւ. «*...զի Խաչատուր Մինտէրճիին տեղ նստած է Սահակ Մէյխանէճին, եւ Դաւիթին տեղ Ազարիայ, Կարկառեցիին տեղ ուրիշ Կարկառեցի մը*»[13]: Սակայն, ինչպէս գրում է Օրմանեանը՝ «*Կիլիկիոյ կաթողիկոսութեան ներքին անցքերուն, եւ կրկնակ աթոռակալներուն գործերուն վրայ աւելի մանրամասնութիւններ չունինք*»[14]:

Կիլիկիայի Խաչատուր Գ. կաթողիկոսից յետոյ, նրա յաջորդների պատմութիւնը, նոյնիսկ կիսկատար ձեւով չի տրւում: Հետեւաբար, Սահակ Մէյխանէճիի եւ հակաթոռ Ազարիա Կարկառեցու պաշտօնավարման թուականների շուրջ տարակարծութիւններ կան:

Վերը նշուած կաթողիկոսների պաշտօնավարման թուականների ճշգրտութեան համար ուսումնասիրել եւ համեմատել ենք նրանց մասին տեղեկութիւններ հաղորդող աղբիւրներն ու ուսումնասիրութիւնները:

Այսպէս, Չամչեանը Կիլիկիոյ կաթողիկոսների ցանկում միայն գրել է Սահակի անունը՝ 1679ը դնելով նրա կաթողիկոսութեան սկիզբը եւ տասը տարի նշանակելով կաթողիկոսութեան տեւողութիւնը, իսկ հակաթոռ Ազարիա Կարկառեցու անունը՝ 1683, հինգ տարի տեւողութեամբ[15]: Չամչեանի հաղորդած տուեալներն օգտագործել են Օրմանեանը եւ մերօրեայ այլ հեղինակներ: Հրաչեայ Աճառեանն իր *Հայոց Անձնանունների Բառարան*ում, Սահակ կաթողիկոսի պաշտօնավարման թուականները նշում է 1679-1683՝ յղելով Օրմանեանին[16]: Սակայն Ազարիա Կարկառեցու հակաթոռութեան սկիզբը նոյնպէս նշում է 1679, իսկ 1683՝ նրա մեկնումը Հռոմ՝ յղելով *Ազգապատում* եւ *Սիսուան*[17] աշխատութիւնները եւ Հալէպի Ձեռագրացուցակի[18] Հմր. 105 (Տօնացոյց եւ Աւետարանացոյց, 1679) եւ Հմր.108 (Տօնացոյց, 1681) ձեռագրերը՝ գրուած Սահակ Մէյխանէճիի եւ Ազարիա Կարկառեցու պաշտօնավարման տարիներին[19]: Սակայն հետաքրքականն այն է, որ նոյն *Սիսուան* աշխատութեան մեջ Հայր Ղեւոնդ Ալիշանը Սահակ Մէյխանէճիի կաթողիկոսութեան թուականի սկիզբը նշում է 1679, իսկ Ազարիա Կարկառեցունը՝ 1683[20]:

Ազարիա հակաթոռ կաթողիկոսի պաշտօնավարման տարեթուի վերաբերեալ տեղեկութիւն ենք գտնում Մատենադարանի արխիւային բաժնի «17-19-րդ դդ. արաբերէն եւ օսմաներեն վաւերագրերի անմշակ ֆոնդ»ի թիւ 4 արաբերէն վաւերագրում[21]: Այն հիջրայի 1087ի Զուլ-հաջի ամսի 13-ին/16 Փետրուարի, 1677ի Հալէպի Շարիա դատարանի[22] հաստատումն է առ այն, որ այդ թուականին Հալէպի հայ քրիստոնեայ համայնքի եպիսկոպոս Պօղոս ուալադ Ազարը հայ համայնքի պատրիարք

Ազարիա ալ-Նասրանիի[23]՝ վեքիլն է, իսկ որպէս Պօղոս ուալադ Ազարի վեքիլ եւ եպիսկոպոսութեան հարկահաւաք հաստատւում է Պօղոս ուալադ Մուրադը:

1677ին Ազարիա անունով պատրիարք չենք տեսնում ո՛չ Կ.Պոլսի եւ ո՛չ էլ Երուսաղէմի հայոց պատրիարքների ցանկերում: Ուսումնասիրութեան արդիւնքում պարզ դարձաւ, որ այստեղ խօսքը վստահ Սսի Սահակ Ա. Մէյխանէճիի հակաթոռ Ազարիա Կարկառեցու մասին է[24]: Իսկ «պատրիարք» (արաբ. بطريق) բառի օգտագործումը «կաթողիկոս» (كاثوليكوس) բառի փոխարէն, անճշտութեան հետեւանք է:

Ինչպէս վերը նշուեց, այս երկու կաթողիկոսների պաշտօնավարման տարեթուերի հետ կապուած անճշտութիւններ կան, որոնց մասին ժամանակին նշել է նաեւ Կիլկիկիոյ Բաբկէն Ա. Աթոռակից կաթողիկոս Կիւլէսէրեանն իր *Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ* աշխատութեան մէջ: Վերջինս քննական համեմատութիւն է անցկացրել մի շարք ձեռագրերի, յիշատակարանների եւ սկզբնաղբիւրների միջեւ՝ փորձելով լրացնել պատմական բացը եւ որոշ ճշգրտումներ կատարել այդ երկու՝ Սահակ Ա.ի եւ Ազարիա հակաթոռ կաթողիկոսների պաշտօնավարման թուականների հարցում:

Բաբկէն Ա.ի համեմատական ձեռագրերն են.-

1) Զմմառի թիւ 331 ձեռագիրը (1687), որի սկզբում առկայ ցանկում ասւում է. «*Ի թվին հայոց ՌՃԻԳ (=1674) կալաւ զաթոռ հայրապետութեան Տէր Սահակ կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, որ է ինքն Քիլիսցի*»[25]: Այստեղ նշուած թուականն ու ծննդավայրը ճշգրիտ են: Այս ցանկը վերցրած է մասամբ Կիլիկիայի կաթողիկոսների «Սսոյ Մաշտոց»ից եւ ճոխացուած է վերջին յաւելուածներով:

2) Այնթապի բոլորգիր Ճաշոց. «*Եւ եղեւ գծագրութիւն գրոյս ի թվին ՌՃԻԶ (=1677), ձեռամբ ոչինչ հողիկ նուաստի Յովհաննէս անարժանի, ի յերկիրս Գերմանիկոյ, ի գիւղաքաղաքս ի Զեթուն, ընդ հովանեաւ Սրբուհւոյ ամէնօրհնեալ Աստծին. մենաստանին եւ Սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին եւ այլ է (=7) փաճարացս որք աստ կան ի պահպանութիւն քրիստոնէից: Ի կթղսութե. Կիլիկեցւոց Տ. Սահակին*» եւն.[26]:

3) Անկիւրիայի Կարմիր Վանքի թիւ 77 ձեռագիր (հաւաքածու). «*Գրեցաւ Քարոզգիրքս ի թվին ՌՃԻԶ (=1677) ի յերկիրս Գերմանիկոյ ի գիւղաքաղաքս Զեթուն... ի կաթողիկոսութեանն Կիլիկեցւոց Տէր Սահակին եւ Տէր Ազարիային*» եւն.[27]:

4) Հալէպի թիւ 105 Տօնացոյց (1679). «*Արդ գրեցաւ Տօնացոյցս եւ այլ երգերս ի լաւ եւ ի ընտիր աւրինակէ, ի թւիս. ՌՃ եւ ԻԸ, Ապրիլ ամսոյ ի ԺԱ (=11) ի մայրաքաղաքն Հալապ... Արդ եղեւ յաւարտումն Տօնացոյցիս ի հայրապետութեան Կիլիկիոյ Տեառն Տէր Սահակին եւ Տեառն Տէր Ազարիային Կաթողիկոսաց*»[28]:

5) Հալէպի Թիւ 108 Տօնացոյց (1681). «*Արդ գրեցաւ Տաւնացոյցս եւ այլ երգերս ի լաւ եւ ի ընդիր աւրինակէ, ի թվկնիս. ՌՃԼ. եւ Աւգոստոս ամսոյ ի Դ (=4), ի մայրաքաղաքն Հալապ… Արդ եղեւ յաւարտումն Տաւնացուցիս ի հայրապետութեան Կիլիկիոյ Տեառն Տէր Սահակին եւ Տեառն Տէր Ազարիային Կաթողիկոսաց: Աւարտեցաւ ձեռամբ… Ածատուր Քինյի*»[29]:

Սահակ Ա. կաթողիկոսի պաշտօնավարման տարեթուի մասին յիշատակութիւն կայ նաեւ Երուսաղէմի թիւ 397 ձեռագրում, որի վերջին դատարկ թղթի վրայ արաբերէն յիշատակուած է ուխտաւորների կողոպուտն ու սպանութիւնները «*ի ՌՃԻԶ (=1677)… որ ի Սիս Սահակ կթղկսն էր*»[30]:

Իվերջոյ, Բաբկէն կաթողիկոսը մէջբերում է նաեւ մի վաւերագիր, որը հենց Սահակ կաթողիկոսից է մնացել. «*Յի. Քի. ծառայ Սահակ կթղս. ամենայն հայոց, եւ պատրիարք Սբ. աթոռոյն յԵմայ. եւ սպասաւոր Սբ. Լուսաւորչի Աջոյն, մինչեւ որ պարտքն վճարվի. գրեցաւ թվին ՌՃԻԹ. (=1680) եւ Օգոստոսի Բ. (=2)*»: Այն կնքուած է կաթողիկոսի կնիքով, որի վրայ փորագրուած է. «Քի. Ծոյ. Սիկ. Կթղս. Հայոց Պտրգ. Սրբ. Երսմյ. ՌՃԻԳ» (=1674)[31]:

Բաբկէն կաթողիկոսը վստահօրէն նշում է, որ Սահակ Մէյխանէճիի՝ Չամչեանի նշած տարեթուերը պէտք է ուղղուեն ըստ վերը նշուած յիշատակագրութիւնների, ինչպէս նաեւ ըստ կաթողիկոսի պաշտօնավարման կնիքի թուականի՝ ՌՃԻԳ (=1674):

Եւ եթէ նրա վախճանից անմիջապէս յետոյ՝ ՌՃԼԵ=1686 նրան յաջորդում է Գրիգոր Բ. Ատանացի կաթողիկոսը (ըստ վերջինիս պաշտօնական կնիքի թուականի) ապա Սահակ Ա.ն 12 տարի է պաշտօնավարել եւ մահացել է 1686ին, եւ ոչ թէ 1689ին: Սակայն դժբախտաբար այդ երկար տարիների գործունէութիւնն անյայտ է պատմութեանը:

Վերը նշուած աղբիւրներից եւ ոչ մէկում չի նշւում Ազարիա Կարկառեցու Հալէպի թեմի առաջնորդ լինելու մասին: Միայն Արտաւազդ Արք. Սիւրմէեանն է գրում այդ մասին՝ մէջբերելով Տէր Ղազար Զէյթունցու եւ Տէր Աստուածատուր Ուրֆացու համառօտ յիշատակարանները: Ըստ այդ յիշատակարանների, որպէս Հալէպի առաջնորդ առաջին անգամ Ազարիա արքեպիսկոպոսի մասին յիշատակութիւն գտնում ենք Հալէպում գրուած «Տօնացոյց»ի մէջ, 1671 Հոկտեմբերի 21ին, իսկ երկրորդ անգամ՝ 1673ին, Հալէպի Հաւաքմանց թիւ 102 փոքր Մաշտոցի վերջում[32]: Սիւրմէեանը նաեւ ենթադրում է, որ Դաւիթ հակաթոռ կաթողիկոսն է Ազարիային ձեռնադրել որպէս իր յաջորդ, եւ վերջինիս հակաթոռութեան թուականները նշում է ճիշտ՝ յղելով Կիլէսէրեանին[33]:

Մինչեւ 1677 Ազարիա հակաթոռ Կարկառեցին չի յիշատակւում Սահակ Ա. Կիլիկիոյ կաթողիկոսի հետ: Չամչեանը Ազարիայի հակաթոռութեան

թուականը նշում է 1683, հինգ տարի տեւողութեամբ[34]: Սակայն, ըստ վերոյիշեալ վաւերագրերի, այն պէտք է նշել 1677՝ Սահակի կաթողիկոսութեան (1674ից) 3րդ տարում:

Մինչեւ 1681 Սահակ Ա.ն եւ հակաթոռ Ազարիա կաթողիկոսները գրեթէ միշտ միասին են յիշատակւում, իսկ 1683ից սկսած յիշատակարաններում միայն Սահակն է յիշւում: Դա պէտք է բացատրել այն հանգամանքով, որ Ազարիան, տարուելով կաթոլիկութեամբ, 1683ին (ինչպէս նշուած է նրա տապանաքարի վրայ) չնայած ծեր հասակին, գնում է Հռոմ[35]: Ուրացման դէպքը, ըստ Կիւլէսէրեանի՝ կաթոլիկների նկատմամբ ճնշումների հետեւանք է, քանի որ թուրքերը կաթոլիկներին ստիպում էին իսլամ ընդունել: Ոմանք նահատակւում էին, ոմանք ուրանում էին իրենց կրօնը եւ ազատւում, իսկ ոմանք էլ կեղծ ուրացութեամբ ճողոպրում էին վտանգից եւ ապաստանում օտար երկիր[36]:

Հռոմում էլ Ազարիա հակաթոռ կաթողիկոսը կնքում է իր վախճանը 1710 Մայիս 23ին, 92 տարեկանում եւ թաղուած է Ս. Մարիամ Եգիպտացի Եկեղեցու մէջ[37]: Նրանից յետոյ ընդհատուեց Բերիայի հակաթոռ կաթողիկոսութիւնը, թէեւ պառակտումը չվերացաւ:

Այսպիսով, Բաբկէն կաթողիկոսի կատարած լայնածաւալ ուսումնասիրութեանն ու ուղղումներին ի լրացում ունենք եւս մէկ աղբիւր՝ Մատենադարանի վերոնշեալ արաբերէն վաւերագիրը: Այդ վաւերագրի հաղորդած տեղեկութիւններն ու թուականները կարեւոր են նաեւ այն առումով, որ այն որպէս Շարիա դատարանի արձանագրութիւն, փաստօրէն պաշտօնական փաստաթուղթ է: Սակայն նշուած վաւերագրից պարզ է դառնում մի շատ կարեւոր հանգամանք եւս, այն որ թէեւ Օսմանեան Կայսրութեան հայերին միլլէթ համակարգի շրջանակում տրուած էր որոշակի ազատութիւն ներհամայնքային եւ կրօնական հարցերում[38], սակայն, փաստօրէն, անգա՛մ հայոց ներեկեղեցական կեանքում կատարուող ցանկացած փոփոխութիւն հաստատւում եւ վերահսկւում էր օսմանեան իշխանութիւնների կողմից:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Արտաւազդ Արք. Սիւրմէեան, *Պատմութիւն Հալէպի Հայոց, Հտր. 3*, Փարիզ, 1950, էջ 1-2:

[2] Դրանցից ամենահինը գրուած է 1329ին Հալէպում՝ «*Ընդ հովանեաւ սուրբ Աստվածածին*» եկեղեցու, գրիչ՝ Ստեփանոս Կրակցի. «*Գրեցաւ ի Հալէպս, որ է Բերիայ ի թվին ՉՀԸ (1329)*»: Այս Աւետարանի յիշատակարանի թուականի հետ անճշտութիւն կայ. Սիւրմէեանի կազմած *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն Մանկունք Եկեղեցւոյ եւ Մասնաւորաց*ի, ինչպէս նաեւ *Պատմութիւն Հալէպի Հայոց*ի *3րդ Հատորի* մէջ, խօսելով վերը նշուած ձեռագրի մասին, գրչութեան թուականը նշում է 1429: Նրան յղելով՝ Յովհաննէս Թօփուզեանն աւելացնում է. «*Սա առաջին հաստատ տեղեկութիւնն է Հալէպում*

հայկական եկեղեցու, հետեւաբար եւ հայկական կազմակերպուած համայնքի գոյութեան մասին»: Սակայն Հայր Ներսէս Ակինեանը ներկայացնում է Սիւրմէեանի կազմած ձեռագրացուցակը՝ վերլուծութիւններ եւ ճշտումներ կատարելով ցուցակագրուած ձեռագրերի վերաբերեալ, էջ 442 յստակ գրում է 1329, ապա փակագծերի մէջ նշում՝ «ոչ 1429» եւ յստակ նշում ձեռագրում գրչութեան ժամանակի նշման էջը՝ 214բ (Սիւրմէեան, *Պատմութիւն, Հտր. 3*, էջ 24. նաեւ՝ Թօփուզեան, *Սիրիայի եւ Լիբանանի Հայկական Գաղթօջախների Պատմութիւն*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ. 1986, էջ 31. նաեւ՝ Հայր Ն. Ակինեան, «Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն Մանկունք Եկեղեցւոյ Եւ Մասնաւորաց, Կազմեց Ա. Արք. Սիւրմէեան, Առաջնորդ Հայոց Հալէպի», *Հանդէս Ամսօրեայ*, 1935, էջ 442. նաեւ՝ Ա. Աբրահամեան, *Համառօտ Ուրուագիծ Հայ Գաղթավայրերի Պատմութեան, Հտր. Ա.*, Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 433): Մի այլ ձեռագիր Հալէպում գրուել եւ ծաղկազարդուել է 1355ին Յովհաննէս գրչի կողմից (Սիւրմէեան, էջ 10. նաեւ՝ Թօփուզեան, էջ 31):

[3] Վ. Մակարեան, «Հայկական Միլլէթի Կազմաւորումը Եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքների Իրաւասութիւնները», *Էջմիածին*, 2016 Օգոստոս, էջ 121. նաեւ՝ Վ. Միքայէլեան, *Հայ Գաղթաշխարհի Պատմութիւն, Հտր. 2*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2003, էջ 332:

[4] Սիւրմէեան, էջ 21-22:

[5] Հուրի Ազէզեան, «Բերիոյ Թեմը Եւ Իր Եկեղեցիները», *Հասկ Հայագիտական Տարեգիրք*, Թ. տարի, 1997-2001, Անթիլիաս-Լիբանան, 2001, էջ 390:

[6] *Հայ Սփիւռքի Հանրագիտարան*, Երեւան, Հայկական Հանրագիտարան Հրատ. 2003, էջ 520:

[7] Այս մասին տե՛ս նաեւ՝ A. Sanjian, *The Armenian Communities in Syria under Ottoman Dominion*, Cambridge, Massachusetts, 1965, էջ 230:

[8] Բ. Ա. Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Կիւլէսէրեան, *Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ*, Անթիլիաս-Լիբանան, Տպարան Դպրեվանուց 1939, էջ 207, 245-298:

[9] *Ժամանակագրութիւն Գ. Վրդ. Դարանաղցւոյ*, Երուսաղէմ, Տպարան Առաք. Աթոռոյ Ս. Յակոբեանց, 1915, էջ 330:

[10] Կիւլէսէրեան, էջ 265-266:

[11] Նոյն, էջ 394:

[12] Մաղաքիա Արք. Օրմանեան, *Ազգապատում, Հտր. Բ.*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 2998. նաեւ՝ Մ. Չամչեան, *Հայոց Պատմութիւն, Հտր. Գ.*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1984, էջ 698, 699:

[13] Օրմանեան, էջ 3004: Օրմանեանի հաղորդած տեղեկութիւնները յիշեալ երկու կաթողիկոսների վերաբերեալ սահմանափակւում են նրանց անունների բացատրութեամբ. «*Սահակի Մէյխանէճի մականունին բացատրութիւնը չենք գտներ, թէ արդեօք գինեպան կամ գինեպանի զաւակ եղած էր, թէ ոչ պարզապէս արբշիռ մը: Իսկ Ազարիա Գանըպեանց ազգատոհմէն սերած, եւ Ղաթրանի մականուն ստացած է, որ ձիւթի նման սեւաթոյր եղած ըլլալու իմաստը կու տայ: Կիլիկիոյ կաթողիկոսութեան ներքին անցքերուն, եւ կրկնակ աթոռակալներուն գործերուն վրայ աւելի մանրամասնութիւններ չունինք*» (նոյն):

[14] Նոյն:

[15] Չամչեան, էջ 111:

[16] Հրաչեայ Աճառեան, *Հայոց Անձնանունների Բառարան, Հտր. Դ.*, Երեւան, Պետական Համալսարանի Հրատ., 1948, էջ 370:

[17] Հ. Ղեւոնդ Ալիշան, *Սիսուան*, Վենետիկ-Ս. Ղազար, 1885:

[18] Ա. Արք. Սիւրմէեան, *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն Մանկունք Եկեղցւոյ եւ Մասնաւորաց, Հտր. Ա.*, Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց,1935, էջ 183, 186:

[19] Հրաչեայ Աճառեան, *Հայոց Անձնանունների Բառարան, Հտր. Ա.*, Երեւան, Պետական Համալսարանի Հրատ., 1942, էջ 57:

[20] Ալիշան, էջ 218:

[21] Տուեալ ֆոնդի արաբերէն վաւերագրերի մասին մանրամասն տե՛ս՝ Վ. Մակարեան, Մ. Խեչօ, «Շարիա Դատարանների Արձանագրութիւնները Հալէպահայութեան Կարգավիճակի Վերաբերեալ (17-19-րդ դդ.) (Ըստ Մաշտոցեան Մատենադարանի Արաբերէն Վաւերագրերի Տուեալների)», *Բանբեր Մատենադարանի, Հմ. 23,* մամուլի տակ:

[22] Իսլամական կրօնական դատարաններ: Նախաօսմանեան շրջանում Շարիա դատարաններին համարժէք էին Մաջլիս ալ-հուքմը (mağlis āl ḥukm) եւ աւելի քիչ գործածական՝ Մաջլիս ալ-քադան (mağlis āl qaḍā'): Իսկ օսմանեան շրջանում Շարիա դատարանները կոչւում էին մահքամա (maḥkama)՝ (W.B. Hallaq, "The Qadi's Diwan (sijill) before the Ottomans," *Bulletin of the School of Oriental and African Studies*, University of London, Vol. 61, No. 3 (1998), էջ 415-436):

[23] Օսմանեան Շարիա դատարանների արձանագրութիւններում (sijill, sijilat) «Ալ-Նասրանի» (al-Nasrani)՝ քրիստոնեայ, ինչպէս նաեւ՝ ալ-Ռումի (al-Rumi), ալ-զիմմի (al-zimmi) բառերը պարտադիր կցւում էին քրիստոնեայ հայցուորների անուններին: Սակայն, պէտք է նշել, որ մուսուլման հայցուորների կրօնական պատկանելիութեան նշումը պարտադիր չէր: Այս, ինչպէս նաեւ մի շարք այլ եզրերի օգտագործումը օսմանեան կրօնական դատարանների արձանագրութիւններում ստացել է «բնագրային խտրականութիւն» անուանումը (մանրամասն տե՛ս՝ Najwa al-Qattan, "Textual Differentiation in the Damascus Sijill," *Women, the Family, and Divorce Laws in Islamic History*, Amira El Azhary Sonbol (ed.), Syracuse University Press, 1996, էջ 191-202):

[24] Կիւլէսէրեանը Ազարիա հակաթոռ կաթողիկոսի անուան վերաբերեալ այլ տեղեկութիւններ էլ է հաղորդում. «*Ազարիա յորջորջուած է նաեւ Գանըպեանց, իբրեւ փոհմանուն: Իսկ իր փապանագրին մէջ Azzaria Carib, հայերէն պիտի ըսէինք Կարիպեան կամ Ղարիպեան: Դժուար է ճշդել որն է ուղիղը Գանըպեա՞նց թէ Ղարիպեան*» (Կիւլէսէրեան, էջ 418):

[25] Նոյն, էջ 411:

[26] Նոյն, էջ 413: Ձեռագիրը փոխադրուած է Երուսաղէմ:

[27] Նոյն, էջ 414:

[28] Նոյն:

[29] Աւելի մանրամասն մէջբերուած այլ յիշատակարանների մասին տե՛ս՝ Կիւլէսէրեան, էջ 413-415:

[30] Նոյն, էջ 414:

[31] Նոյն, էջ 413:
[32] Սիւրմէեան, *Պատմութիւն*, էջ 622. նաեւ՝ Մատենադարան Երուսաղէմի Ձեռագրաց, թիւ 2497. նաեւ՝ Սիւրմէեան, *Ցուցակ*, էջ 180:
[33] Սիւրմէեան, *Պատմութիւն*, էջ 623, 626:
[34] Չամչեան. նաեւ՝ *Ժամանակագրութիւն*, էջ 111:
[35] Կիւլէսէրեան, էջ 416:
[36] Նոյն, էջ 415-416:
[37] Նոյն, էջ 416:
[38] Այս մասին մանրամասն տե՛ս՝ Մակարեան:

THE DATE WHEN CATHOLICOS AZARIA GARGARETSI ESTABLSIHED HIS RIVAL SEAT (17TH-18TH CENTURIES)
(ACCORDING TO THE SHARIA COURT REGISTER OF ALEPPO)
(Summary)

VENERA MAKARYAN
makaryanvenera@yahoo.com

Aleppo is the second largest and oldest prelacy of the Catholicosate of Cilicia, which has its seat in Sis. Between 1660 and the 1920s Aleppo became the administrative and religious centre of the Catholicosate, with its prelacy located at the Holy Forty Martyrs Church.

In the 17th century a new wave of unrest started in the Catholicosate due to internal disagreements, as well as the spreading of Catholicism. These developments eventually led to the emergence of a rival seat of Cilicia in the prelacy of Aleppo.

The first rival Catholicos was Petros Karkaretsi, who challenged the office of Hovhannes IV Ayntaptsi, the Catholicos of Sis (1601-1621). The challenge was repeated by David Beriatsi during the Catholicosate of Khachatur Gaghatatsi (Sebastatsi) (1657-1674). No clear imformation is available about the dates of Sahak Meykhanedji, Catholicos of Cilicia and his rival, Azaria Karkaretsi (1677-1683).

Basing her statement on the Aleppo Sharia court's Arabic document preserved in Mashtots Matenadaran, and with further proof from adjunct-Catholicos Babken A. Kyuleserian's, Fr. Mikayel Chamchian's, and Archb. Malakia Ormanian's studies, the author resolves the existing discrepancy regarding their datesin office.